ԱՆՀՈԳ ԳԻՒՂԱՑԻ.

Ցորենդ հնձեցիր, արտդ հերկեցիր,
Բիւր բարիքներով ամբարդ լցրիր,
Սարիցը իջար, խուզ պանիր շինած,
Հանդարտ ու անհոգ տանդ ես նստած,
Ասա, ո՛ եղբայր, էլ դու բան չունե՞ս,
Վերջացա՞ն գործերդ. ինչո՞ւ պարապ ես.
Դաշտային բոլոր գործդ վերջացաւ,
Ձիւնով երկիրը արդէն ծածկուեցաւ,
Վառեցիր թոնիրդ, ոտքերդ քաշ արիր.
Կարծես բան չունես՝ հէքեաթն սկսեցիր.
Ասա, ո՛ եղբայր, էլ դու հոգ չունե՞ս,
Ինչո՞ւ դու անգործ օրերդ կանցնես.
Դիցուք ձմեռ է, դաշտը չես ելնում,
Գետինը սառել է, երկիր չես հերկում,
Ցորենդ կալսած ամբարդ ես լցրել,
Ձմեռուայ պաշարդ լրիւ պատրաստել.
Ասա, ո՛ եղբայր, էլ դու բան չունե՞ս,
Որ անհոգ ու թեամբ թոնիր կախուել ես.
Արան *) գնացիր, բամբակ ժողուեցիր,
Գարնանն էլ բոլոր ոչխարդ խուզեցիր.
Ամեն բան պատրաստ ահա դու ունես,
Ասա, ո՛ եղբայր ինչո՞ւ պարապ ես.
Էլ դու գործ չունե՞ս, որ ամբողջ օրով
Տանդ նստել ես՝ պարապած նաղլով.
Ինքդ ա՛ռ ուրագ, սայլդ պատրաստիր
Գութանի կոտրած լծները շինիր,
Կնոջդ ձեռքը թեշին, ջահրէն տուր,
Որդուցդ էլ ուսման՝ օրդ չանցնես ի զուր.
Գարունք կրացուի ամեն ինչ պատրաստ,
Դու դաշտը կելնես ուրախ ու զուարթ,
Երբ քու ձեռքովդ ամեն ինչ հոգաս,
Ուրիշին կարօտ ինքդ չմնաս,
Քո պիտոյքներդ ինքդ պատրաստես,
Որդուցդ էլ ուսման սիրով ուղարկես,
Տես թէ երջանիկ կեանք չե՞ս ունենալ,
Հանգիստ ապահով շուտ հարստանալ.

ՍԷԹ.

(*) Էրանխի հովիտը, ուր են Էրասխի աջ կողմից Սուրմալուի իսկ ձախ կողմից՝ Սարտարապատի գաւառակները. ի հնումն՝ Մասեացոտն եւ Արագածոտն՝ Արան է կոչվում.